ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ---------- 2022 թվականի N---Ա

ք. Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2008 թվականի հունիսի 6-ի «Էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» N308Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածի՝ էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգի (այսուհետ՝ Կարգ) №2 հավելվածի՝ «Տեղեկատվություն ատոմային էլեկտրակայանում արտադրված էլեկտրական էներգիայի (հզորության) վերաբերյալ» №2-3 ձևով սահմանված տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 25-ն է,

բ) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի օգոստոս ամսվա արդյունքներով Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2022 թվականի սեպտեմբերի 27-ին,

գ) Հանձնաժողովը Որոշմամբ սահմանված պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով 2022 թվականի հոկտեմբերի 7-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել

է Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 7-ի ՈԳԲ/34.4-Ղ4-2/3477-2022 գրությամբ,

դ) Ընկերությունը 2022 թվականի հոկտեմբերի 11-ի ՆԵ/15/2256-22 գրությամբ հայտնել է, որ Տեղեկատվությունը կազմվել է 2022 թվականի սեպտեմբերի 15-ին, սակայն սահմանված ժամկետում Հանձնաժողով չի ներկայացվել, քանի որ նշված ժամանակահատվածում Ընկերությունում չի գործել փաստաթղթերի էլեկտրոնային շարժի «Mulberry» համակարգը՝ հավելելով նաև, որ Տեղեկատվությունն ուղարկվել է Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի ոչ ճիշտ հասցեին, որը Ընկերության աշխատակիցը բանավոր հարցմամբ ստացել է Հանձնաժողովի աշխատակցից,

ե) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշմամբ սահմանված՝ Տեղեկատվության ներկայացման ժամկետը: Վարչական վարույթի շրջանակում Ընկերության ներկայացրած հիմնավորման առնչությամբ հարկ է փաստել, որ Որոշման համաձայն՝ Տեղեկատվության ներկայացման վերջնաժամկետը հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 25-ն է, իսկ Կարգի 4-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը Տեղեկատվությունը Հանձնաժողով կարող է ներկայացնել առձեռն, փոստային կամ էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթերի էլեկտրոնային շարժի «Mulberry» համակարգի խափանման դեպքում Ընկերությունը Տեղեկատվությունը կարող էր ներկայացնել նաև առձեռն կամ փոստային եղանակով: Հետևաբար, որպես կարգավորվող անձ քաջատեղյակ լինելով այդ մասին և Տեղեկատվության ներկայացման համար ունենալով առնվազն 25 օր ժամանակ՝ Ընկերությունը պետք է պատշաճ ջանքեր գործադրեր Տեղեկատվությունը Որոշմամբ սահմանված ժամկետում Հանձնաժողով ներկայացնելու համար: Հատկանշական է նաև, որ 2022 թվականի օգոստոս ամսվա արդյունքներով Տեղեկատվության ներկայացման համար Որոշմամբ սահմանված՝ 2022 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 25-ը ներառյալ ժամանակահատվածում Հանձնաժողովի փաստաթղթերի էլեկտրոնային շարժի «Mulberry» համակարգում առկա են Ընկերության նույն համակարգից ստացված մի շարք գրություններ (այդ թվում՝ 2022 թվականի օգոստոս ամսվա արդյունքներով լրացված՝ Որոշմամբ սահմանված №2-7 տեղեկատվական ձևը), ինչը վկայում է այն մասին, որ նշված ժամանակահատվածում՝ բացառությամբ սեպտեմբերի 15-ի, Տեղեկատվությունը փաստաթղթերի էլեկտրոնային շարժի «Mulberry» համակարգի

միջոցով ևս կարող էր ներկայացվել: Բացի այդ, Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն ակնհայտ տեսանելի է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի գլխավոր (հիմնական) դաշտում, և ի թիվս հրապարակված այլ տեղեկատվության, բոլոր շահագրգիռ անձինք կարող են պաշտոնական կայքէջից ստանալ նաև Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեի հղումը: Հատկանշական է նաև այն, որ 2022 թվականի օգոստոս ամսվա արդյունքներով Տեղեկատվության ներկայացման համար Որոշմամբ սահմանված՝ 2022 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 25-ը ներառյալ, ինչպես նաև դրանից ավելի վաղ ժամանակահատվածում ևս Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի ճշգրիտ հասցեին (psrcinfo@psrc.am) առկա են Ընկերության կողմից ուղարկված բազում հաղորդագրություններ (այդ թվում՝ այլ հաշվետվությունների մասով): Ուստի, Ընկերության կողմից նշվածը Տեղեկատվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման հիմնավոր պատճառ չի կարող հանդիսանալ, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------- 2022թ.